# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*21-ը մարտի 2015թ.*

**ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

*/Զեկուցող՝ Զ. ԳԵՎՈՐԳՅԱՆ/*

## *N 1-Ն ՈՐՈՇՈՒՄ*

*Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով «2015թ.-ի բյուջեի առկա ֆինանսական միջոցները համամասնորեն բաշխելու», ինչպես նաև ծախսային մասն արդյունավետ կազմակերպելու նպատակով՝ առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16/3 և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 34/4 հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2015թ-ի տարեկան բյուջեի եկամտային մասի փոփոխության առաջարկությանը՝ համաձայն հատված 1-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2015թ-ի տարեկան բյուջեի ծախսային մասի փոփոխության առաջարկությանը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման, համաձայն հատված 2-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2015թ-ի տարեկան բյուջեի ծախսային մասի փոփոխության առաջարկությանը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման,համաձայն հատված 3-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2015թ-ի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդին կամ դեֆիցիտին (պակասուրդին), համաձայն հատված 4-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդի օգտագործման ուղղություններին կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներին՝ համաձայն հատված 5-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2015թ-ի տարեկան բյուջեի ծախսային մասի փոփոխության առաջարկությանը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման, համաձայն հատված 6-ի:
- «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝

ա) թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև, /հազ.դրամ/

| | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | Ընդ. |
|---|---|---|---|
| Եկամտային մաս | 446758.1 | 22500,0 | 446758.1 |
| Ծախսային մաս | 446758.1 | 66775.9 | 491034.0 |
| Դեֆիցիտ | ------ | -44275.9 | -44275.9 |
| Պահուստային ֆոնդ | 22500,0 | | |

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ
ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ
ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ
ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ
ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ՕՎՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*21-ը մարտի 2015թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ՏԱՐԵՑՆԵՐԻ ԺԱՄԱՆՑԻ ՎԱՅՐԻ ԳՈՒՅՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Գ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

*N 2-Ա ՈՐՈՇՈՒՄ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16/5 հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին՝*

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Աշտարակ քաղաքի տարեցների ժամանցի վայրի գույքի պահպանման և տարածքի անվտանգության ապահովման նպատակով Աշտարակ քաղաքի բնակիչ Էդիկ Անուշավանի Մելոյանին /անձ. 004294047/ հատկացնել ամենամսյա դրամական աջակցություն՝ 15 000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամի չափով:

ԱՎԱԳԱՆԻ՝

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ
ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ
ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ
ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ
ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

# <u>ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

*21-ը մարտի 2015թ.*

**2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-ԻՆ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻՆ ԴԻՄԱԳՐԱՎԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ԶՈՀՎԱԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ, ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԷԴՎԱՐԴ ԳԱԳԻԿԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

*/Զեկուցող՝ Ա. ԱՆՏՈՆՅԱՆ/*

*<u>N 3-Ա ՈՐՈՇՈՒՄ</u>*

*Հիմք ընդունելով 2015թ. մարտի 19-ին հյուսիսային /Գյուլիստանի/ ուղղությամբ տեղակայված հակառակորդի հատուկ նշանակության ջոկատին դիմագրավելու ժամանակ արիաբար մարտնչած Աշտարակ համայնքի բնակիչ, ժամկետային զինծառայող Էդվարդ Հայրապետյանի զոհվելու հանգամանքը, ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/5 հոդվածի և <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. 2015թ. մարտի 19-ին հյուսիսային /Գյուլիստանի/ ուղղությամբ տեղակայված հակառակորդի հատուկ նշանակության ջոկատին դիմագրավելու ժամանակ արիաբար զոհված ժամկետային զինծառայող, Աշտարակ քաղաքի Մուղնի թաղամասի բնակիչ Էդվարդ Գագիկի Հայրապետյանի ընտանիքին /սոցիալապես անապահով/ միանվագ տրամադրել 500.000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ օգնություն:
2. Էդվարդ Գագիկի Հայրապետյանի տատիկին՝ Աշտարակ քաղաքի Մուղնի թաղամասի բնակչուհի Կատար Երմոյի Հայրապետյանի /անձ. AF 0496437, 029, 10.12.2001թ./ անունը մտցնել ամենամսյա դրամական օգնություն ստացողների ցուցակի մեջ, յուրաքանչյուր ամիս նրան վճարելով 15.000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ:

<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ
ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ
ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ
ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ
ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# <u>ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

*21-ը մարտի 2015թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 04.12.2014թ. N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Գ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

***<u>N 4-Ա ՈՐՈՇՈՒՄ</u>***

*Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/26, <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 77, 78 հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Աշտարակ համայնքի ավագանու 04.12.2014թ.-ի հմ. 3-Ա որոշման հավելված 1-ում (1.3 <Արևիկ> մանկապարտեզ, 1.4 <Հասմիկ> մանկապարտեզ) գործավար/կադրերի պատասխանատուի հաստիքային միավորը սահմանել 1, նախկին 0.5-ի փոխարեն:
2. Աշտարակ համայնքի ավագանու 04.12.2014թ.-ի հմ. 3-Ա որոշման հավելված 6-ում (<Արայի> մշակույթի տուն) հավաքարարի հաստիքային միավորը սահմանել 1, նախկին 0.5-ի փոխարեն:

<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ
ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ
ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ
ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ
ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ՕՎՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*21-ը մարտի 2015թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ՊՌՈՇՅԱՆ ՓՈՂՈՑԻ 9/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՆԱԽԿԻՆ ՇՈՒԿԱՅԻ ԿԻՍԱՔԱՆԴ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ /ԳՆԵԼՈՒ/ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/*

***N 5-Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Նկատի ունենալով Աշտարակ քաղաքի Պռոշյան փողոցի 9/1 հասցեում գտնվող Հայաստանի սպառողական կոոպերատիվների միության սեփականությունը հանդիսացող նախկին շուկայի անշարժ գույքի ներկայիս անմխիթար ու աղբավայրի վերածված մտահոգիչ վիճակը, որը քաղաքի բնակչության կողմից բազմիցս գրավոր ու բանավոր դժգոհությունների տեղիք է տվել, հաշվի առնելով հարցի կարգավորման ուղիներ գտնելու վերաբերյալ <Հայկոոպ> վարչության հետ ունեցած մեր պայմանավորվածությունը, նշված տարածքը բարեկարգելու և այն քաղաքի ազգաբնակչությանը ծառայեցնելու նպատակով, ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի, 50-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Համաձայնություն տալ՝ Աշտարակ քաղաքի Պռոշյան 9/1 հասցեում գտնվող, <Հայկոոպ>-ի սեփականություն հանդիսացող նախկին շուկայի կիսաքանդ շինությունը մինչև 4 /չորս/ միլիոն դրամի սահմաններում գնելու և այն քաղաքի հաստատված գլխավոր հատակագծին համապատասխան որպես համայնքային սեփականություն հանգստի կանաչապատ գոտի բարեկարգելու և տնօրինելու քաղաքապետի առաջարկությանը:

**ԱՎԱԳԱՆԻ՝**

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ
ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ
ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ
ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ
ՇԱՀԱՋԻՋՅԱՆ ԿԱՐԵՆ
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*21-ը մարտի 2015թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ <ՏԱՆՁԱՆՈՑ> ԹԱՂԱՄԱՍԻ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ՄԱՅՐ ԱՌՎԻՑ ՎԵՐԵՎ ԸՆԿԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/*

***N 6-Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Տարիներ շարունակ ոռոգման ցանցից զրկված <Տանձանոց> թաղամասի, ինչպես նաև քաղաքի միջով անցնող մայր առվից վերև ընկած հողատարածքների ոռոգման հարցը կարգավորելու նպատակով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 14.03.1997թ.N 51՝ <Համայնքային սեփականության գույքի ցանկը սահմանելու մասին> որոշումը՝ համաձայն որի ներհամայնքային նշանակության ոռոգման համակարգը որպես սեփականություն հանձնվել է համայնքին, նկատի ունենալով, որ այդ համակարգի մեջ մտնող, քաղաքի վարչական տարածքում գտնվող գյուղ. նշանակության որոշ հողատարածքների ոռոգման բարելավման նպատակով դեռևս 90-ական թվականներին անցկացված երկաթյա և ցինկապատ խողովակներով ոռոգման փակ ցանցը մինչ օրս չի շահագործվել և ներկայումս էլ դրա անհրաժեշտությունը չկա, հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքի միջոցներից գումար ներդնելու պայմաններում նշված խողովակաշարը հնարավոր է ապամոնտաժել և այն ամբողջությամբ օգտագործել վերը նշված տարածքների ոռոգման համակարգի կառուցման համար, ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Համաձայնություն տալ մայր առվից վերև ընկած հողատարածքների ոռոգման մայրուղու կառուցման նպատակով համայնքի բյուջեում համապատասխան փոփոխություն կատարելու և օրենքով սահմանված կարգով կազմված նախահաշվով նախատեսված գումար տրամադրելու միջոցով նշված խողովակաշարն ապամոնտաժելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

**ԱՎԱԳԱՆԻ՝**

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ
ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ
ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ
ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ
ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ
ՕՎՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# <u>ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

*21-ը մարտի 2015թ.*

## ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Կ. ՀՈՎԵՅԱՆ/*

***<u>N 7-Ա ՈՐՈՇՈՒՄ</u>***

*Ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. hմ.1920-Ն որոշման պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 844-012 /0.001հա/, 844-013 /0.004հա/, 844-014 /0.02հա/, 844-015 /0.24հա/, 844-016 /0.004հա/ և 844-017 /0.08հա/ ծածկագրերում գտնվող, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողատարածքների նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի հասարակական կառուցապատման փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը և ներկայացված գլխավոր հատակագծի փոփոխման առաջադրանքի նախագծին:
2. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 391-001 ծածկագրում գտնվող 0.14հա անտառային նշանակության հողատարածքի նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածքների /հանգստի գոտի/ փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը և ներկայացված գլխավոր հատակագծի փոփոխման առաջադրանքի նախագծին:

<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>

| *ԿՈՂՄ - 8* | *ԴԵՄ – 0* | *ՁԵՌՆՊԱՀ - 1* |
|---|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | | ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | | |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | | |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | | |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | | |
| ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ | | |
| ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ | | |
| ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ | | |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# <u>ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

*21-ը մարտի 2015թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԵՐԻՑ ՈՐՈՇ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Կ. ՀՈՎԵՅԱՆ/*

***<u>N 8-Ն ՈՐՈՇՈՒՄ</u>***

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի $48^{1}$,76-80 հոդվածների, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի դրույթներով, Աշտարակ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին՝*

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1.Համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողատարածքներ կառուցապատման իրավունքով /մրցույթ/ տրամադրելու և հաստատել տարեկան վճարի մեկնարկային գին՝ համաձայն հավելված 3-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>

| *ԿՈՂՄ - 8* | *ԴԵՄ – 0* | *ՁԵՌՆՊԱՀ - 1* |
| --- | --- | --- |
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ<br>ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ<br>ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ<br>ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ<br>ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ<br>ՇԱՀԱՋԻՋՅԱՆ ԿԱՐԵՆ<br>ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ<br>ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ | | ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

*Հավելված 3*
*Աշտարակ համայնքի ավագանու*
*21.03.2015թ. N 8-Ն որոշման*

Հողերի կառուցապատման իրավունքի տրամադրման մրցույթ

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | 1քմ-ի տարեկան վճարի մեկնարկային գինը դրամ | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | հողատարածք | Քասախի կիրճ | 859-250-ից | 1000 | հատուկ պահպանվող տարածքներ | | Հանգստի գոտի | 100 | |
| 2 | հողատարածք | Պ. Սևակի N63 տան դիմաց | 094-001-ից | 66.6 | բնակավայրերի | | Ընդհանուր օգտագործման | 100 | |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ԴԱՏՈՒՄՅԱՆ

# <u>ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

*21-ը մարտի 2015թ.*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀՈՂԵՐ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

*/Զեկուցող՝ Կ. ՀՈՎՅԱՆ/*

*<u>N 9-Ն ՈՐՈՇՈՒՄ</u>*

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի դրույթներով, Աշտարակ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Համայնքի սեփականություն համարվող բնակավայրերի նշանակության որոշ հողեր աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>

| *ԿՈՂՄ - 8* | *ԴԵՄ – 1* | *ՁԵՌՆՊԱՀ - 0* |
|---|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ | |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | | |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | | |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | | |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | | |
| ՇԱՀԱՔԻՋՅԱՆ ԿԱՐԵՆ | | |
| ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ | | |
| ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ | | |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

*Հավելված 1*
*Աշտարակ համայնքի ավագանու*
*21.03.2015թ. N 9-Ն որոշման*

Հողերի աճուրդ-վաճառք

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | Մեկնարկային գինը /կադաստրային արժեքի/ % | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | հողատարածք 5 միավոր | Տ. Մեծի 31 շենքի հարևանությամբ | 843-008-ից | 20 | բնակավայրերի | | բնակելի | 65 | |
| 2 | հողատարածք | Տ. Մեծի 5 շենքի հարևանությամբ | 843-001-ից | 22.4 | բնակավայրերի | | հասարակական | 65 | |
| 3 | հողատարածք | Տ. Մեծի 5 շենքի հարևանությամբ | 843-001-ից | 38.6 | բնակավայրերի | | բնակելի | 65 | |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ԴԱՏՈՒՄՅԱՆ

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*21-ը մարտի 2015թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀՈՂԵՐ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Կ. ՀՈՎՀԵՅԱՆ/*

*N 10-Ն ՈՐՈՇՈՒՄ*

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66, 67-70 հոդվածների, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի դրույթներով, Աշտարակ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողեր աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 2-ի:
2. Համայնքային սեփականություն համարվող 526-010 ծածկագրից 3.0հա գյուղատնտեսական նշանակության /արոտ/ հողամասը ուղղակի վաճառքով /կադաստրային արժեքով/ օտարել <Ծիլին> արտադրական կոոպերատիվին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

| *ԿՈՂՄ - 8* | *ԴԵՄ – 1* | *ՁԵՌՆՊԱՀ - 0* |
|---|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ | |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | | |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | | |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | | |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | | |
| ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ | | |
| ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ | | |
| ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ | | |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*21-ը մարտի 2015թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀՈՂԵՐ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Կ. ՀՈՎԵՅԱՆ/*

*N 10-Ն ՈՐՈՇՈՒՄ*

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66, 67-70 հոդվածների, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի դրույթներով, Աշտարակ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողեր աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 2-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆԻ՝

| ԿՈՂՄ - 8 | ԴԵՄ – 1 | ՁԵՌՆՊԱՀ - 0 |
|---|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ | ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ | |
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | | |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | | |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | | |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | | |
| ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ | | |
| ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ | | |
| ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ | | |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

*Հավելված 2*
*Աշտարակ համայնքի ավագանու*
*21.03.2015թ. N 10-Ն որոշման*

Հողերի աճուրդ-վաճառք

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | Մեկնարկային գինը /կադաստրային արժեքի %/ | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | հողատարածք | Արայի տեղամաս | 659-012 | 2279 | գյուղ. | այլ | | 100 | |
| 2 | հողատարածք | Արայի տեղամաս | 662-121 | 2440 | գյուղ. | այլ | | 100 | |
| 3 | հողատարածք | Արայի տեղամաս | 376-018-ից 379-001-ից | 4հա | գյուղ | այլ | | 100 | |
| 4 | հողատարածք | Արայի տեղամաս | 671-001-ից | 0.49183հա | գյուղ | արոտ | | 100 | |
| 5 | հողատարածք | Արայի տեղամաս | 671-001-ից | 1.3հա | գյուղ | արոտ | | 100 | |
| 6 | հողատարածք | Արայի տեղամաս | 646-007-ից | 0.45հա | գյուղ | այլ | | 100 | |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ԴԱՏՈՒՄՅԱՆ

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*21-ը մարտի 2015թ.*

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊՈՒՐԱԿ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Ա. ԱՆՏՈՆՅԱՆ/*

*N 11-Ն ՈՐՈՇՈՒՄ*

*Քասախ գետի կախովի կամրջին և Քասախի կիրճին հարող հատվածներում գտնվող, 083-017 ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 800քմ հողամասը բարեկարգելու և այն համայնքի ազգաբնակչության հանգստի համար որպես կանաչապատ պուրակ ծառայեցնելու նպատակով, ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/20 հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Համաձայնություն տալ՝ Քասախ գետի կախովի կամրջին և Քասախի կիրճին հարող հատվածում գտնվող 083-017 ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 800քմ հողամասը /հատակագիծը կցվում է/ օրենքով սահմանված կարգով կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված նախագծա-նախահաշվային փաստաթղթերի առկայությամբ որպես պուրակ կառուցապատման մրցույթ հայտարարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

ԱՎԱԳԱՆԻ՝

| *ԿՈՂՄ - 8* | *ԴԵՄ – 1* | *ՁԵՌՆՊԱՀ - 0* |
|---|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ<br>ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ<br>ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ<br>ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ<br>ՇԱՀԱՁԻՋՅԱՆ ԿԱՐԵՆ<br>ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ<br>ՔԱՍՅԱՆ ՍՏՅՈՊԱ<br>ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ | ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն